հյուսված՝ ալրի մաղը, գործ էր ածվում տանը, ոչ կալի վրա, արդեն պատրաստի ալյուրը մաքրելու համար։ Խախալնէրի մեջ զանազանում էին քարմաղը և ավելի նուրբը՝ փէկէմաղը[43]։ Մաքրելու համար դիմում էին և տէփուիին՝ փայտե լայն կլոր, ցածրիկ պռունգներով սկուտեղին, որի վրա հատիկները վեր ձգելով և թափ տալով հեռացնում էին ավելորդ խառնուրդները, մեծ մասամբ քարերը։ Մաղերը շինում էին տեղում, օրինակ՝ Ուզ գյուղում, բայց գերադասում էին գնել շրջիկ դարաշինէրից՝ բոշաներից[44], գնչուներից, որոնք իրենց վրաններով գավառից գավառ անցնելով՝ այստեղ էլ պարբերաբար երևվում էին։ Նրանք գալիս էին գլխավորապես Լենինականից և Ախալքալաքից, ուր անցել են հայերի հետ Կարինից 1828—1829 թթ. մեծ գաղթի ժամանակ՝ Պասկևիչի օրոք մղված ռուս-տաճկական պատերազմից հետո։

Արդեն քանած հատիկները լցնում էին մագե չվալնէրը՝ մեծ պարկերը։ Ամեն մեկ չվալ տանում էր 5—7 փութ։ Չվալնէրը շալակում էին ոչ միայն տղամարդիկ, այլ հաճախակի և կանայք։ Զանգեզուրի կինը չէր վախենում ծանր բեռ շալակելուց, նույնիսկ պառավ հասակում, բայց իհարկե տղամարդու շալակած չվալից ավելի թեթև չվալ։ Ներսում չվալնէրից ածում էին ավելի մեծ, մոտ 3—5 չվալ վերցնող, նույնպես մագե խարարնէրը։

Ցորենը լվանում էին մեծ մասամբ գետի ափին կամ աղբյուրի մոտ, թե մաղերի և թե տաշտերի օգնությամբ, ապա փռում էին արևի տակ՝ չորացնում՝ ջաղաց ուղարկում և որպես ալյուր պահում, կամ ուղղակի թափում էին ամբարի՝ հոիֆաքի մեջ, իսկ ավելացածը պահում էին ֆորի՝ հորի մեջ։ Հորը փորվում էր խոնավությունից բոլորովին ապահով չոր տեղ, ունենում էր մարդու իրանի լայնության տրամագծով բերան և հետզհետե լայնացող կողեր։ Հատակն ու կողերը պատում էին ծղոտով կամ կաղնու տերևով, լցնելուց հետո ծածկում էին բարե կամ կավե կափարիչով և ապա հողով։ Կափարիչով ծածկելուց առաջ երեսին դրվում էր հասկերից կապած մի խաչ— որ քաշկէրն և չար ոգիները չմտնեն՝ չգողանան։ Ժամանակ առ ժամանակ ստուգվում էր՝ արդյո՞ք հորի մեջ ցորենը չի սկսել որթնոտել, ծաղկել կամ այլ կերպ վնասվել։ Հորից ցորեն հանելը երբեմն կապված էր լինում այնտեղ հավաքված գազերից ուշաթափվելու կամ խեղդամահ լինելու վտանգի հետ։

Կալը մաքրելուց հետո և կալսել սկսելուց առաջ գալիս էր քահանան և կալն օրհնում։ Դրա համար աշխատանքները վերջանալուց հետո նա ստանում էր իր բաժինը, սովորաբար 4 կիլոյի չափ ցորեն[45]։

Թե՛ արտը հավաքելիս և թե՛ կալը վերջացնելիս զանգեզուրցին խույս էր տալիս բերքը— խուրձերի քանակը, չվալնէրի թիվը բարձրաձայն հաշվելուց՝ այսպես կոչված հաշվի վախից... Նա հավատում էր, որ բարաքաթը՝ օգտակար և հարատև գործադրելիությունը կարող էր պակասել։ Ավելի ևս չէր սիրում որևէ մեկին այդ թիվը ճիշտ ասել, այս անգամ և այն պատճառով, որ ավելի քիչ բաժին հանի հողատիրոջն ու պետական և գյուղական հարկահավաքին։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Երկրագործությունից հետո Զանգեզուրի ժողովրդական հարստությունը հիմնված էր անասնապահության վրա, որը հայ բնակչության տարեկան արդ-

---

43 Սիսիանում։

44 Բոշա բառն այստեղ գործածական չէ։

45 Արծվանիկ։